«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2020թ. օգոստոսի 31-ի թիվ 1 նիստում գիտական խորհրդի նախագահ՝

Ռուբեն Միրզախանյան

ԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԺԱՄԱՆՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները և սահմանումները

Սովորողների ակադեմիական շարժունություն՝ դասընթացների, ներառյալ հետազոտությունների կազմակերպում որոշակի ժամանակահատվածով, սակայն ոչ ավելի, քան մեկ տարի՝ օտարերկրյա որևէ այլ համալսարանում: Դասընթացների ավարտից հետո սովորողը վերադառնում է իր համալսարան:

Ուղարկող համալսարան՝ համալսարան, որն սովորողին ուղղորդում է շարժունության:

Ընդունող համալսարան՝ համալսարան, որն սովորողին ընդունում է համապատասխան ժամանակահատվածով որոշակի դասընթացներ անցնելու և համապատասխան կրեդիտներ ստանալու նպատակով:

Ուսուցման արդյունքների ճանաչում՝ գնահատման համակարգի ներդաշնակեցում, գնահատման չափանիշների և համակարգի ճանաչում, որի հիման վրա իրականացվում է առարկաների փոխճանաչումը և հաստատումը:

Գնահատման թերթիկ՝ քաղվածք ընդունող ուսումնական հաստատությունների պաշտոնական փաստաթղթերից: Ներառում է՝ առարկաների ցանկը, որոնք սովորողը սովորել է ընդունող համալսարանում, վերջիններիս ժամային բաշխվածությունը, կրեդիտը և գնահատականները, ինչպես նաև հաջողությունների մասին տեղեկություններ:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը ներառում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամի (հետայսու՝ համալասարան) սովորողների համար նախատեսված ակադեմիական շարժունության ծրագրերի մասնակցության ներքին կարգավորումները:
2. Համալսարանի միջազգային ակադեմիական համագործակցության զարգացման հիմնական նպատակն է կրթության որակի բարելավումը՝ ապահովելով սովորողի կրթական միջավայրի փոփոխականությունը, նրա մասնագիտական գիտելիքների հարստացումը, կրթական ծառայությունների մրցունակության ու գրավչության բարձրացումը:
3. Սույն կարգի իրավական հիմքն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ-ի օգոստոսի 25-ի N 1240-ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը»:
4. Կրթական համագործակցության համար հիմք են հանդիսանում միջազգային ակտերը, միջկառավարական և (կամ) միջբուհական համաձայնագրերը և հուշագրերը:
5. Համալսարանում սովորողների համար նախատեսված ակադեմիական շարժունության ծրագրերի կազմակերպման և ընթացակարգային բոլոր գործառույթների համար՝ ներառյալ ֆինանսավորում ստանալու համար դիմելը, պատասխանատու է միջազգային համագործակցության բաժինը:

II. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

6. Համալսարանի միջազգային համագործակցության բաժնի կողմից պատրաստվում է անհրաժեշտ տեղեկատվությունը և տրամադրվում է համալսարանի լրատվության և հանրության հետ կապերի վարչություն՝ բուհի կայքում տեղադրելու համար:
7. Համալսարանի միջազգային համագործակցության բաժնի կողմից տրամադրվող տեղեկատվությունը պարունակում է՝
   1) Ժամանող սովորողների համար՝

ա. դիմում-հայտի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
բ. կացարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը,
գ. մուտքի վիզայի հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը,
դ.առողջական ապահովագրության վերաբերյալ տեղեկատվությունը,
ե. կրթաթոշակի վերաբերյալ տեղեկատվությունը,

զ. օտար լեզվով հասանելի առարկաների ցանկը տվյալ կիսամյակի համար:

2) Մեկնող սովորողների համար՝

ա. դիմում-հայտի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

բ. օտար լեզվի իմացության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը,

գ. կացարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը,

դ. մուտքի վիզայի հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը,

ե.առողջական ապահովագրության վերաբերյալ տեղեկատվությունը,

զ. կրթաթոշակի վերաբերյալ տեղեկատվությունը:

8. Համալսարանի լրատվության և հանրության հետ կապերի վարչության կողմից ստացված տեղեկատվությունը բուհի պաշտոնական կայքում հրապարակվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

III. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Ակադեմիական շարժունության ծրագրերին սովորողների մասնակցությունը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ-ի օգոստոսի 25-ի N 1240-ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ»-ով:

10. Ակադեմիական շարժունության ծրագրերին դիմելու համար համալսարանից մեկնող և համալսարան ժամանող սովորողները (առկա ուսուցման բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) պետք է՝

ա. ունենան բարձր առաջադիմություն ուսումնական ընթացիկ տարվա նախորդող կիսամյակում /անցողիկ ՄՈԳ-ը կորոշվի նախապես հանձնաժողովի կողմից/

բ. տիրապետեն շարժունության մասնակցության համար անհրաժեշտ օտար լեզվի,

գ. չլինեն ավարտական կիսամյակի սովորողներ /եթե մեկ այլ կարգով այլ սահմանափակում նախատեսված չէ/:

IV. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

11. Ակադեմիական շարժունության ծրագրերին շրջանակում համալսարան ժամանող սովորողները պետք է ներկայացնեն՝

ա. դիմում-հայտ,

բ. եռակողմ համաձայնագրի նախագիծ,
գ. անձնագրի լուսապատճենը,
դ. մոտիվացիոն նամակ,
ե. օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ:

12. Ակադեմիական շարժունության ծրագրերին շրջանակում համալսարանից մեկնող սովորողները պետք է ներկայացնեն՝
    ա. դիմում-հայտ,
    բ. եռակողմ համաձայնագրի նախագիծ,
    գ. անձնագրի լուսապատճենը,
    դ. մոտիվացիոն նամակ,
    ե. օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ /եթե առկա է/
13. Ակադեմիական շարժունության ծրագիրն ավարտող սովորողները պետք է համալսարան ներկայացնել՝
    ա. եռակողմ համաձայնագրի բնօրինակը
    բ. եռակողմ համաձայնագրում կատարված փոփոխությունների բնօրինակը,
    գ. ընդունող բուհի կողմից տրամադրված գնահատման թերթիկը,
    դ. Տեղեկատվություն ընդունող համալսարանի գնահատման կարգի մասին:

V. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԴԻՄԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

14. Ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում համալսարան ժամանող սովորողների ընտրությունն իրականացնում է ուղարկող համալսարանը և առաջադրում նրանց թեկնածությունը համալսարանում հաստատելու համար, եթե գործընկեր բուհերի միջև այլ պայմանավորվածություններ առկա չեն:
15. Համալասարանում ակադեմիական շարժունության ծրագրի դիմած սովորողների ընտրությունը իրականացվում է հանձնաժողովի կողմից, որը նախագահում է միջազգային համագործակցության բաժնի աշխատանքները համակարգող պրոռեկտորը կամ վերջինիս բացակայության դեպքում ռեկտորի հանձնարարությամբ այլ պրոռեկտոր::
16. Հանձնաժողովը ձևավորվում է միջազգային համագործակցության բաժնի աշխատանքները համակարգող պրոռեկտորի կամ վերջինիս բացակայության դեպքում ռեկտորի հանձնարարությամբ այլ պրոռեկտորի հանձնարարությամբ: Հանձնաժողովը ունի հետևյալ կազմը՝ համապատասխան ֆակուլտետի դեկան, փոխդեկան կամ ամբիոնի վարիչ; միջազգային բաժնի պետ և բաժնի մասնագետ, իրավաբան, օտար լեզվի ֆակուլտետի դեկան, համապատասխան ամբիոնի վարիչ կամ դասախոս:
17. Հանձնաժողովի կազմը հաստատում է համալսարանի ռեկտորը:

18. Համալսարանի կողմից գործուղվող սովորողների ընտրությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ-ի օգոստոսի 25-ի N 1240-ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգի» համաձայն բանավոր հարցազրույցի միջոցով, որը անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել առցանց:
19. Համալսարանի կողմից գործուղվող սովորողների ընտրությունն իրականացվում է, հիմնվելով հետևյալ բաղադրիչների վրա, եթե ընդունող համալսարանի կողմից այլ պահանջներ ներկայացված չեն՝
    ա. կուտակային ՄՈԳ,
    բ. օտար լեզվի իմացություն,
    գ. մոտիվացիոն նամակ,
    դ. ինքնակենսագրական,

19. Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթղթի բացակայության դեպքում, լեզվի իմացությունը ստուգվում է հանձնաժողովի կողմից հարցազրույցի ժամանակ և անհրաժեշտության դեպքում տրվում է համապատասխան տեղեկանք ընդունող համալսարան ներկայացնելու համար:

VI. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԴԻՄՈՂ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Սովորողներն իրավունք ունեն համալսարանի միջազգային համագործակցության բաժնից պահանջել և ստանալ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվություն:
21. Սովորողներն իրավունք ունեն անսահմանափակ անգամ դիմել ծրագրերի՝ մինչև որևէ ծրագրում ընդունող համալսարանի կողմից վերջնական հրավեր ստանալը:
22. Շարժունության ծրագրերում մասնակցած սովորողը կարող է դիմել այլ շարժունության ծրագրերի եթե այլ սահմանափակումներ նախատեսված չեն:
23. Սովորողներն իրավունք ունեն, ցանկության դեպքում, մասնակցելու համալսարանի կողմից անվճար տրամադրվող օտար լեզվի ուսուցման դասընթացներին:
24. Սովորողները պարտավոր են հայտարարված ծրագրերին դիմել հայտարարություններում նշված ժամկետների համաձայն:
25. Սովորողները պարտավոր են լրացնել առցանց դիմում-հայտը և կցել անհրաժեշտ փաստաթղթերը, այլապես դիմումը կհամարվի ոչ լիարժեք և չի դիտարկվի:

VII. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Սովորողներն իրավունք ունեն համալսարանի միջազգային համագործակցության բաժնից պահանջել և ստանալ ծրագրի շրջանակներում հաղթող սովորողներին առնչվող համապարփակ տեղեկատվություն:
27. Սովորողներն պարտավոր են համալսարանի միջազգային համագործակցության բաժին ներկայացնել ֆակուլտետի դեկանի հետ վերջնական համաձայնեցված եռակողմ համաձայնագիրը:
28. Սովորողներն պարտավոր են ընդունող բուհի կողմից պաշտոնական հրավերը ստանալուց հետո դիմել տվյալ երկրի դիվանագիտական ներկայացուցչություն՝ մուտքի արտոնագիր ստանալու նպատակով:
29. Սովորողներն պարտավոր են համալսարանի միջազգային համագործակցության բաժին ներկայացնել մեկնման և վերադարձի գնված տոմսերի պատճենները:
30. Վճարովի համակարգում սովորելու պարագայում սովորողները պարտավոր են մուծել տվյալ կիսամյակի ուսման վարձը մինչև ընդունող բուհ մեկնելը:

VIII. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՎԱՐՏԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

31. Սովորողներն իրավունք ունեն վերադառնալուց հետո շարունակել կրթությունն համալսարանում՝ համապատասխան օրենսդրական կարգավորումների համաձայն:
32. Սովորողները պարտավոր են համալսարանի միջազգային համագործակցության բաժնի կողմից կազմակերպվող տեղեկատվական հանդիպումների ժամանակ ներկայացնել իրենց փորձը:
33. Սովորողներն պարտավոր են մասնակցելու փոխանակման ծրագրերի վերաբերյալ այլ կաղզմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին՝ համալսարանի միջազգային համագործակցության բաժնի կողմից նման համաձայնություն ունենալու դեպքում:
34. Սովորողներն իրավունք ունեն ներկայացնել իրենց փորձը ինչպես համալսարանական այնպես էլ այլ լրատվական հարթակներում:
35. Սովորողները պարտավոր են շարժունության ավարտից հետո վերադառնալ ԲՈՒՀ և շարունակել ուսումը:
36. Սովորողները պարտավոր են ԲՈՒՀ վերադառնալուց հետո մասնակցել ԲՈՒՀ-ի միջազգայնացման վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

IX. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

37. Համալսարանի օտար լեզուների ֆակուլտետը հարցազրույցից հետո անհրաժեշտության դեպքում տրամադրում է օտար լեզվի իմացության վերաբերյալ տեղեկանք:
38. Համալսարանի համապատասխան ֆակուլտետը, որտեղ սովորում է ակադեմիական շարժունության ծրագիրը հաղթող սովորողը պարտավոր է կատարել առարկաների համադրություն միջազգային համագործակցության բաժնի հետ համատեղ ընդունող բուհի կողմից նախապես տրամադրված ուսումնական պլանների համապատասխան (Հավելված 1):
39. Համալսարանի համապատասխան ֆակուլտետը, որտեղ սովորում է ակադեմիական շարժունության ծրագիրը հաղթող սովորողը, պարտավոր է համալսարանի ուսումնական հարցերի համար պատասխանատու պրոռեկտորին մինչև սովորողի մեկնելը ներկայացնել զեկուցագիր՝ սովորողի գործուղման ժամկետների, առարկաների համադրելիության, սովորողի կողմից համալսարանում բաց թողնվող առարկաների վերաբերյալ (Հավելված 2):
40. Հիմք ընդունելով ֆակուլտետի կողմից ներկայացված զեկուցագիրը՝ համալսարանի միջազգային համագործակցության բաժինը պատրաստում է մեկնող և ժամանող սովորողի շարժունության վերաբերյալ հրաման:
41. Համալսարանի համապատասխան ֆակուլտետը, որտեղ սովորում է ակադեմիական շարժունության ծրագրին մասնակցած սովորողը պարտավոր է սովորողի վերադարձից հետո՝ սովորողի դիմումի (Հավելված 3) և գնահատման թերթիկի հիման վրա, համալսարանի ուսումնական հարցերի համար պատասխանատու պրոռեկտորին ներկայացնել զեկուցագիր գնահատականների ճանաչման վերաբերյալ (Հավելված 4):
42. Հիմք ընդունելով համալսարանի համապատասխան ֆակուլտետի ուսումնական հարցերի համար պատասխանատու պրոռեկտորին ներկայացված զեկուցագիրը համապատասխան հիմքերով, համալսարանի միջազգային համագործակցության բաժինը պատրաստում է սովորողների ժամանման և կրեդիտների ճանաչման վերաբերյալ հրաման:
43. Համալսարանի համապատասխան ֆակուլտետը, ուր ժամանում է օտարերկյա սովորողը պարտավոր է ուղարկող համալսարանին նախապես տրամադրել տվյալ ուսումնական կիսամյակում օտար լեզվով դասավանդվող առարկաների ցանկը:

44. Համալսարանի համապատասխան ֆակուլտետը, ուր ժամանում է օտարերկյա սովորողը պարտավոր է կազմակերպել սովորողի ուսումնական գործընթացը, ինչպես նաև ապահովել համապատասխան միջավայր օտարերկրյա սովորողի ներառման համար:

45. Համալսարանի համապատասխան ֆակուլտետը, ուր ժամանում է օտարերկյա սովորողը պարտավոր է դասընթացների ավարտից հետո սովորողին տրամադրել գնահատման թերթիկ (Հավելված 5), ինչպես նաև տեղեկանք տվյալ ֆակուլտետում ուսումնառման ժամանակահատվածի վերաբերյալ (Հավելված 6):

Հավելված 1

Առարկաների համադրության թերթիկ /արտագնա սովորողների համար նախատեսված/

	Ընդունող համալսարան		**ՀՊՄՀ**		
	Առարկայի անվանում	Կրեդիտ	Առարկայի անվանում	Կրեդիտ	Կուրս/կիսամյակ

Ամբիոնի վարիչի անուն, ազգանուն

Ստորագրություն՝

Միջազգային համագործակցության բաժնի պետի անուն, ազգանուն

Ստորագրություն ՝

Հավելված 2

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ_____

Հարգարժան պարո՛ն/տիկին_____,

տեղեկացնում ենք, որ Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում _____ ֆակուլտետի _____ բակալավրի կրթական ծրագրի _____ կուրսի ուսանող_____ /ուսանողի անուն, ազգանուն/ մեկնելու է _____ /համալսարանի անվանումը/՝ մեկ կիսամյակ այնտեղ սովորելու նպատակով: Ընդունող համալսարանի և ՀՊՄՀ համապատասխան կառույցների կողմից իրականացվել է կրեդիտների ճանաչում և համապատասխանեցում, ըստ որի սովորողը _____ /ուս տարի/ _____ /կիսամյակ/ _____ /ընդունող համալսարանի ամնվանումը/ ուսումնասիրելու է կից հավելվածում ներկայացված դասընթացները (*տե՛ս հավելված*):

Կրեդիտների ընդհանուր գումարը _____ է:

_____ /ընդունող համալսարանի անվանումը/ համալսարանում ուսումնասիրվող դասընթացների ցանկում չընդգրկված դասընթացների ստուգման ձևերի հանձնումը կազմակերպել ուսանողի վերադարձից հետո: Այդ դասընթացների ստուգման ձևերի հանձնումը չհամարել ակադեմիական պարտքի մարում:

Ստորև ներկայացվում են այդ դասընթացները.

1. _____

Հաշվի առնելով եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման հնարավորությունը՝ _____ /ընդունող համալսարանի անվանումը/ սովորողի կուտակած կրեդիտները կփոխանցվեն ՀՊՄՀ:

Այդ դասընթացներն են՝

1. _____

Հարգանքով՝

Ֆակուլտետի դեկան /_____/

Հավելված 3

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

201__/201___ ուս.տարվա ուսումնական շարժունության Ուսումնառության ճանաչման դիմում

Ես _____ս, _____
/անուն, ազգանուն/
/ֆակուլտետի անվանումը/

ֆակուլտետի _____ մասնագիտության
/մասնագիտության անվանումը/

_____ կրթական աստիճանի
/բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա/

_____ կուրսի ուսանող մասնակացել եմ ERASMUS+ շարժունության
/կուրս/
ծրագրին:

Ուսումնառության ժամանակահատված –
Հյուրընկալող համալսարանի անվանում –
Երկիր -

Հայցում եմ ստորև ներկայացված ուսումնառության ճանաչումը՝

Հյուրընկալող համալսարանի անվանումը/համալսարանում ուսումնասիրված առակրաները	**Կրեդիտ**	**ՀՊՄՀ-ի կողմից ճանաչված առարկաներ**	**Կրեդիտ**	**Կուրս/կիսամյակ**

Հավելված 4

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

ՊՐՈՌԵԿՏՈՐ ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ_____

Հարգարժան պարո՛ն / տիկին_____,

Տեղեկացնում ենք, որ _____ծրագրի շրջանակներում — _____ ֆակուլտետի _____ /առկա, հեռակա/ ուսուցման _____ /բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա/ _____ մասնագիտության _____ կուրսի ուսանող _____ /ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն/ _____ ուստարվա _____ կիսամյակի ուսումնառությունը կազմակերպվել է _____ համալսարանում՝ _____ /նշել ժամանակահատվածը/:

Կրեդիտների ընդհանուր գումարը կազմում է _____, որը ձևավորվել է _____ /նշել կուրս և կիսամյակ/ դասընթացների կրեդիտներից:

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը _____ /ուսանողի անուն, ազգանուն/ ներքոհիշյալ դասընթացների կրեդիտներն ու գնահատականները _____ /նշել կուրս և կիսամյակ/ փոխանցելու համար, համապատասխան կից ներկայացված հավելվածի:

Կից ներկայացվում է ուսանողի _____ համալսարանի կողմից տրված ակադեմիական տեղեկանքի պատճեն և սովորողի կոմից ներկայացված կրեդիտների ճանաչման դիմումը:

Ֆակուլտետի դեկան՝

Միջազգային համագործակցության բաժնի պետ՝

——————————————— /ընդունող համալսարանի անվանումը/ ուսումնասիրման ենթակա առարկաներ ըստ ——————— /նշել սովորողի մեկնման հրամանը/ հրամանի				Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ <<————————>> մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների համապատասխանեցում			
Առարկայի անվանումը	Կիսամյակ	Կրեդիտ	Առարկայի անվանումը	Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Գնահատական
		Ընդհամենը				Ընդհամենը	

Ֆակուլտետի դեկան՝

Միջազգային համագործակցության բաժնի պետ՝

Հավելված 5

TRANSCRIPT OF RECORDS

ACADEMIC YEAR:

NAME OF SENDING INSTITUTION: Departmental coordinator: E-mail:
NAME OF RECEIVING INSTITUTION: Departmental coordinator: E-mail:
NAME OF STUDENT: Department: E-mail address:

Title of the course unit	Duration of course unit (1)*	Local grade (2)*	ECTS credits (3)*
TOTAL			

Date: Signature administration officer:

Stamp of institution:

(1) Duration of course unit :

Y = 1 academic year

1S= 1 semester 2S= 2 Semesters

1T=1 term/trimester 2T=2 terms/trimesters

(2) Grading:

a) Description of the institutional grading system:

Khachatur Abovyan Armenian State Pedagogical University applies ECTS credit system. 1ECTS credit equals to 30 hours of full workload.

Local grade	ECTS grade
90-100	A
80-89	B
70-79	C
65-69	D
60-64	E
41-59	FX
< 40	F

(3) ECTS credits :

1 academic year = 60 credits

1 semester = 30 credits

1 term/trimester = 20 credits

CERTIFICATE OF ATTENDANCE

Student Data:

First Name, Last Name	
Date of Birth	

Home Institution Data:

Name of Institution	
Faculty/Department	

Host Institution Data:

Name of Institution	
Faculty/Department	

We confirm that the above mentioned student was an exchange student at ASPU:

From:

To:

Dean of the Faculty _____